ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի համար 30 տարին աննշան ժամանակամիջոց է։ Սոցիալիստական կարգերում մեր երկիրն ամբողջովին վերափոխվեց և խոշոր հաջողություններ հասավ։ Պատմականորեն կարճ ժամանակամիջոցում փոխվեց նաև մարդկանց մտածելակերպը, փոխվեց հողերանությունը դեպի աշխատանքը, դեպի արտադրությունը, հանդես եկավ նոր վերաբերմունք—սոցիալիստականք վերաբերմունք։ Աշխատանքը դարձավ պատվի և փառքի գործ։ Այս բոլորը ցայտուն կերպով երևում է Սովետական Հայաստանի 30-ամյակին նվիրված ռեսպուբլիկական ցուցահանդեսում։

Ցուցահանդեսի նախադավթում դրված է միջազգային պրոլետարիատի առաջնորդ Լենինի նկարը ոսկեգօծ շրջանակի մեջ, Լենինի դիմաց նույնատիպ շրջանակի մեջ է առնված ժողովուրդների առաջնորդ, հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինի նկարը և Քաղբյուրոյի ամբողջ կազմը։

Լուսանկարների միջոցով պատկերված է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան և նրա ծնունդ Սովետական Հայաստանը։ Նախամուտքում դրված է Վլադիմիր Իլիչի ողջույնի տեքստը, որտեղ ասված է.

«...Ողջունում եմ իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»։

Այստեղ հայկական սպիտակ մարմարե տախտակի վրա կարդում ենք Ի. Վ. Ստալինի հոչակավոր խոսքերը.

«Միայն Սովետական իշխանության դաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։

Մեր նվաճումների ցուցահանդեսը իրական պատկերացում է տալիս վերափոխված Հայաստանի հաղթականորեն զարգացող արդյունաբերության և կուլտուրայի մասին։

Առաջին մեծ ցուցասրահում այցելուն հրճվանքով դիտում է մինչև առաստաղ բարձրացող ավտոդոզերից կազմված ծանրանիստ սյուներ։ Այս ստենդը ոչ միայն գործարանի կոլեկտիվի, այլև Սովետական Հայաստանի աշխատավորության փառավոր նվաճումներից է։

Տպավորիչ է հայպղնձի արդյունաբերության ցուցադրումը։ Լուսանկարների միջոցով ցույց է տրված ձուլման պրոցեսը, որտեղից պարզ երևում է, որ ընդհանուր հոսանքով հոսում է ժողովրդական տնտեսության համար շատ կարևոր դեղին պղինձը։ Դեռ 1925 թվին մեկ հանքափոր բանվորի արտադրանքի պայմանական 100 տոկոս նորման 1950 թ. աճել է 450 տոկոսով, կամ եթե 1925 թվի համախառն արտադրանքը վերցնենք 100 տոկոս պայմանական թվով, ապա այն 1950 թվին հասել է 3510 տոկոսի։

Պղնձարդյունաբերության ստենդի կենտրոնում դրված է ստախանովական հանքափոր բանվորի արձանը, թվում է, թե հանքափորը իր ձեռքի լապտերով լուսավորում է ոչ միայն ընդերքը—հանքը, այլև ստախանովական շարժման ուղին։

Երևան-կաբել բաժնում ցուցադրված են գործարանի արտադրած ավելի քան 35 տեսակ տարբեր տրամաչափի միալար և բազմալար կաբելները ու շնուրները։

Երևանի կաբել գործարանի հաղթանակը երևում է նաև այն բանից, որ 1946 թվի համեմատությամբ արտադրանքն աճել է ավելի քան 30 անգամ։

Բայց մեռած կապիտալի կվերածվեին պղնձալարերի հազարավոր կիլոմետրեր երկարություն ունեցող փաթաթված լարերը, եթե այն մեր պայմաններում չկապվեր նրանց կենդանություն տվող մեքենաների հետ, խոսքը վերաբերվում է եռաֆազ հոսանքի սինխրոն տարբեր հզորության՝ ուղղահայաց և հորիզոնական՝ գեներատորներին, եռաֆազ հոսանքի ուժային գանազան մարկաների տրանսֆորմատորներին. միկրոգէսերին, զյուզական էլեկտրակայանների վարման վահաններին, որոնք արտադրվում են Հայաստանում և որոնք ցուցադրված են այս սրահում։

Նույն այս սրահում են ցուցադրված նաև

ճշգրիտ չափող գործիքների բազմաթիվ տեսակները։ Այսպես, այդ տեսակների մեջ մտնում են՝ հավաքող (суммирующи) ավտոտրանսֆորմատոր ЛАТР-2 տիպի ամպերմետր, միլիամպերմետր, գծային վիկլուչատելներ, հիդրոավտոմատ և շատ այլ էլեկտրագործիքներ։

Այս նույն ստենդի կենտրոնում հատուկ պատրաստած ցուցափեղկում ցուցադրված են ժամացույցի գործարանի արտադրած՝ սեղանի մի քանի տեսակ բարձրորակ ժամացույցները։

Մեքենաշինության բնագավառի էքսպոնատները գտնվում են առաջին ցուցասրահի կենտրոնում։ Այս էքսպոնատների մեջ են խառատաստակային հաստոցները, քար փրեզերող նորագյուտ ET-1 մոդելի հաստոցը, որը վաղուց գործածության մեջ է մտել և դդալի օգուտսեր տվել շինարարությանը փոխարինելով 10 բանվոր-քարտաշների։

Ցուցադրված մեքենաների մեջ ուշադրավ է հատկապես բաղդահաշինական գործարանի կողմից վերջին տարիներում յուրացված ճրշգրտագույն խառատաստակային 1615-П մոդելի հաստոցը, որն իրավամբ կոչվում է ցուցահանդեսի գեղեցկուհին։ Այս հաստոցի վրա է պատրաստվում արտադրության միջոցներ արտադրող մեքենաների նրբագույն մասերը, ճշգրտագույն պտուտակները։

Ծանր մեքենաշինության բաժնում ցուցադրված են կոմպրեսորների գործարանի արտադրանքի նմուշները, դիզելային սարքավորումներին ծառայող՝ սեղմված օդ մատակարարող РК-30 մարկայի ձեռքի կոմպրեսորների մի քանի տեսակներ, ВК-3-В մարկայի ստացիոնար կոմպրեսորներ։

Հայաստանի ծանր արդյունաբերության մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտ է դիտել փոքր տուրբինների գործարանի արտադրանքի նմուշները։ Դրանց օգնությամբ Հայաստանի աշխատավորությունը իրագործում է մեծ Լենինի և ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի պատգամները էլեկտրիֆիկացման և երկրի ինդուստրացման մասին։ Հայ ժողովուրդը բռնել է ռուս մեծ ժողովրդի հետ ունեցած իր դարավոր կապերի ոսկե օղակից և նրա օգնությամբ տիտանական քայլերով առաջ է ընթանում։

Երկրորդ սրահում տեղավորված է տեղական արդյունաբերության ստենդը, ցուցադրված են մասսայական սպառման համար արտադրված ապրանքների հարյուրավոր նմուշներ։ Շուրջ վեց մետր երկարություն ունեցող ստենդի պատը ծածկված է նույն մինիստրության գործարաններից մեկի արտադրած կաշվին փոխարինող տեքստովինի՝ բացված փաթաթանների գույնզգույն տեսակներով։ Տեղական արդյունաբերության մինիստրության բաժնում ցուցադրված են ընտիր մետաքսից գործված տիսմաներ, շնուրներ, սեղանի լամպեր, մեծ դահլիճների համար կախովի շուրջ երկու մետր տրամագիծ ունեցող պղնձյա գեղեցիկ ջահ, հախճապակյա ամանեղենի նմուշներ, Քանաքեռի ոչկի գործարանի մասսայական սպառման համար պատրաստված կանացի, տղամարդու և երեխայի կոշիկների բազմաթիվ տեսակներ և այլն։

Այն բոլորն ինչ ցուցադրված է, նոր է ստեղծված, ստեղծված է սովետական մարդու ձեռքով, նրա հանճարով, այն առաջացել է Հայաստանի բոլշևիկների ղեկավարությամբ, մեծ առաջնորդի ամենօրյա հոգատարության և Լենինի-Ստալինի պարտիայի ազգային քաղաքականության շնորհիվ։

Այցելուն դիտելով ցուցահանդեսի կուլտուրայի և արվեստի բաժինը, լրիվ պատկերացում է կազմում այս բնագավառում եղած խոշոր նվաճումների մասին։ Ահա մի քանի թվեր միայն պետական հրատարակչության մասին։

1920 թվին Հայպետհրատը հրատարակել է միայն տասը անուն գիրք՝ 575 մամուլ ծավալով և 21,600 տիրաժով, իսկ 1950 թվին՝ 608 անուն, կամ 5815 մամուլ և 3,919,400 տիրաժով։ Այս թվերը իրենք են պատմում մեր աշխատավորների կուլտուրայի անշեղ վերելքի մասին։

Տնտեսական և կուլտուրական վերելքի հետևանքով բարձրացել է նաև աշխատավորության գնողականությունը։ Այսպես, օրինակ, 1927 թ. աշխատավորությունը գնել է 82 հազար ռուբլու գրականություն, իսկ 1950 թ. միայն լենն ամիսներում Հայպետհրատը սպառել է 31 միլ. 600 հազար ռուբլու գրականություն։

Արվեստի բաժնում ցուցադրված էքսպոնատներով ներկայացված են Լենինի շքանշանակիր Պետօպերայի և Բալետի թատրոնը, Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնը, Լենինականի Պետթատրոնը, Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկ թատրոնը և շրջանային թատրոնները։

Կինեմատոգրաֆիայի մինիստրությանը հատկացված է առանձին տեղ։ Դիագրամաների միջոցով ցույց է տրված արվեստի այս ճյուղում աշխատողների նվաճումները և կինո ցանցի տարածումը քաղաքներում ու գյուղերում։ Դեռ 1920 թվին ամբողջ Հայաստանն ուներ ընդամենը 3 կինո-թատրոն, իսկ այժմ միայն գյուղում – կոլխոզնիկների

համար կառուցված 313 կինո-թատրոն, իսկ քաղաքներում կինո-թատրոններն աճել են ավելի քան 13 անգամ։

Ցուցահանդեսի այցելուները մեծ հաճույքով են դիտում Շինանյութերի մինիստրության հատկացված բաժինը։ Այստեղ ներկայացված են ավելի քան 35 որմնաքարերի տեսակներ, որոնցով բարձրացել են Կառավարական տունը, Օպերայի և բալետի Պետական թատրոնի շենքը, Արարատ Տրեստի բնակելի շենքը՝ հայ Սովետական ճարտարապետության գլուխգործոցները և էլի տասնյակ ու հարյուրով հոյակապ շենքեր, բազմաթիվ գործարանների ու ֆաբրիկաների հսկայական ծավալի կորպուսները, կինո-թատրոնների, բանվորական ակումբների ու գրադարանների շենքերը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ գրող Մարիետա Շահինյանը թանգարանի տպավորությունների մատյանում գրում է՝

«Երեք օր շարունակ հաճախում էի ցուցահանդես, որը թողնում է հսկայական տպավորություն՝ հատկապես մեքենաշինության, շինանյութերի և անտառային տնտեսության ստենդները, ինչպես և ջրային տնտեսության նոր ոռոգումների ստենդը...»։

Այս բաժնում ցուցադրված պեմզայի տեսակների, ծածկի մի քանի տեսակ կղմինդրների, շինարարական և հրակայուն աղյուսների ու մոզաիկ աստիճանների մոտ՝ առանձին շուքով են փայլում հայկական մարմարների ավելի քան 18 տեսակները։ Հայկական մարմարը և օնիքսը արդեն հռչակվել են իրենց գրավիչ գույներով և հիանալի հատկություններով։ Հայկական մարմարով երեսպատվել է մեր հայրենիքի մայրաքաղաքի մետրոյի կայարաններից մի քանիսը, նրանով զարդարված են ինչպես Հայաստանի, այնպես էլ Միության տարբեր քաղաքների բազմաթիվ շենքեր։

Բայց հայկական շինանյութերի արժեքն է՛լ ավելի է բարձրանում, երբ այցելուն դիտում է Երևան քաղաքի՝ վարպետորեն լուսանկարված վեց և կես մետր երկարություն ունեցող պանորաման։ Սա գեղեցիկ պողոտաներով, ուղիղ ու լայն փողոցներով, այգիներով ու պուրակներով լեցուն սպիտակ քարից, կարմիր ու վարդագույն տուֆերից կառուցված նոր Հայաստանի նոր մայրաքաղաքն է, պրոլետարական ռևոլուցիայի հանճար մեծ Լենինի արձանով և հայ ժողովրդի փրկարար հայր Ստալինի մոնումենտով զարդարված քաղաքը։

Բավականաչափ հաջող է ձևավորված անտառային արդյունաբերության բաժինը։

Կահույքի արտադրությունը 1940 թվի համեմատությամբ բարձրացել է 526 տոկոսով, որը ցույց է տալիս Սովետական Հայաստանի աշխատավորների նյութական դրության անշեղ վերելքը և կուլտուրայի բարձրացումը։

Բավականաչափ համեստ է ներկայացված Մուլիտի գործարանը։ Մուլիտի ձուլումը, ինչպես այդ երևում է դիագրամներից, 1938 թվի 100 տոկոս պայմանական թվի դիմաց 1950 թվի 9 ամիսներում բարձրացել է 304 տոկոսով։

Այցելուների վրա անջնջելի տպավորություն է թողնում Ջրային տնտեսության մինիստրության ստենդը իր լուսանկարների, դիագրամների և վերակառուցված կոլխոզների դաշտերի նոր սիստեմի ոռոգման պլաններով։ Այստեղ պարզ երևում է, որ ծարավից պապակած նախկին դաշտերը հսկայական տերիտորիայով ոռոգելի են դարձել և այժմ ծածկված են պտղատու այգիներով, պարտեզներով, հացահատիկային կուլտուրաների հսկայական տարածություններով։ Երբեմնի խանձված, բնակությունից զուրկ դաշտերում հանդես են եկել նոր կոլխոզներ իրենց նոր ու կուլտուրական բնակարաններով, պլանավորված կղմինդրածածկ գյուղերով։

Ցուցահանդեսի այցելուն չի կարողանում զսպել իր հրճվանքը և հիացմունքով պատմած իր տպավորությունների մեջ, որ գրված է Պետական պատմական թանգարանի տպավորությունների գրքում իր շնորհակալության առաջին խոսքը ուղղում է մեծ Ստալինին։

«Միթե մարդ ունի այնքան ուժ, որ ամենին դիմանա և ամեն ինչ տեսնելիս չհուզվի իր էությամբ։ Ստալինյան արևի ցոլքերը ինձ ուժ են տալիս, նրա ոսկե վառ օրենքի (խոսքը Ստալինյան Կոնստիտուցիայի մասին է— Հ. Մ.) արդյունքներն են ինձ հուզում... Մենք տեսնում ենք, որ մեր հայրենիքը լույսերի և հույզերի ծով է դարձել, մարդ չի գտնում բառեր բնորոշելու իր սրտի զգացմունքը և անհուն երախտիքը մեծ առաջնորդին, թող երկար ապրի ու գործի սիրելի Ստալինը»։

Այցելուներից ոմանք զարմանքով հարցնում են, միթե այս ամենը մերն է, Սովետական Հայաստանի արտադրությունը։

Ցուցահանդեսի ընդարձակ սրահներից մեկում տեղավորված է Թեթև արդյունաբերության մինիստրության ստենդը։ Այստեղ ներկայացված են վերափոխված Հայաստանի մե-

տաքսի և բրդյա գործվածքեղենը, կաշվի գործարանի արտադրանքը, կաշիների հիանալի նմուշները, կարած կոշկեղեն, մասսայական սպառման համար արտադրված այլ և այլ հագուստեղեն։

Հայաստանի թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1938 թվի անփոփոխ գներով աճել է ավելի քան 27 անգամ։ 1937 թվի համեմատությամբ բրդյա գործվածքեղենը ավելացել է ավելի քան երեք ու կես անգամ։ Մետաքսի բարձրորակ կտորեղենի արտադրանքի աճը 1941 թվի համեմատությամբ ավելացել է չորս անգամ։

Թեթև արդյունաբերության ստեղծում այցելուի ուշադրությունը գրավում է հատկապես Ստեփան Շահումյանի անվան գործարանի արտադրանքը։ Այդ գործարանը կարճ ժամանակում ճանաչվեց իր մետաքսյա ընտիր գործվածքներով, արտադրանքի վրա եղած քնքուշ օրնամենտներով, կտորի բարձր որակով և գիմացկունությամբ։ Գործարանը վերակառուցվել է հետպատերազմյան տարիներին, բայց նրա շրջապատված քաղաքը առաջացել է ոչ հեռավոր անցյալում։ Ընդամենը երկու տասնամյակ առաջ, այստեղ բուսականությունից զուրկ, քարքարոտ, անջրդի և նույնիսկ արոտավայրի համար ոչ պիտանի տերիտորիա էր։ Իսկ այժմ բնությունը վերափոխող սովետական մարդը նախկին ամայի տարածությունը դարձրել է մեր ռայոնական ծաղկուն կենտրոններից մեկն իր գեղեցիկ փողոցներով, կինոյի, թատրոնի շենքերով, ակումբներով, գրադարաններով, դպրոցներով և մանկապարտեզներով։

Աշխատասեր հայ ժողովրդի սիրած արվեստներից մեկն էլ եղել է դորգագործությունը։ Գորգագործության նախանշանները հին Հայաստանում հանդես են գալիս 7-րդ դարում (մ.թ.ա.)։

1939 թվին Կարմիր բլուրում կատարված պեղումների ժամանակ մոտ 5 մետր խորության մեջ հայտնաբերվեցին կապերտի պատռիկներ չուրջ 23 մետր ծալքերով։

Հարյուրավոր տարիներ առաջ Հայաստանում և հայերի ձեռքով գործված գորգերի մեզ հասած նմուշներից երևում է, որ Հայաստանում կիրառական արվեստներից գորգագործության բյուղը զգալիորեն զարգացած է եղել։ Եվ մինչև հիմա էլ օտարերկրյա շատ թանգարաններ զարդարված են հայկական հնագույն գորգերով։ 1202 թվին հայերի ձեռքով հյուսված և հայերեն արձանագրությամբ մի գորգ Վիեննայի դեկորատիվ թանկարանի պարզն է կազմում։ Լոնդոնի թանգարաններից մեկում պահվող, 1680 թվին գործված, գորգի վրա կա հայերեն հետևյալ արձանագրությունը։

«Ես Գուհարս մեզովք լի հոգով տկար էս նորահաս ձեռամբ իմով գործեցի, ով կարդա մեկ բիրան ողորմի ասի»։ (Գ. Լևոնյան, «Գորգագործությունը հին Հայաստանում և նրա վերածնունդը մեր օրերում», Սովետական արվեստ, Երևան, 1940 թ., էջ 79)։

Ցուցահանդեսի այցելուն, դիտելով Հայաստանի արհեստագործական կոոպերացիայի ստեղծը, անշուշտ մտքով սլանում է դեպի պատմական Հայաստանը և Սովետական մարդկանց ձեռքով հյուսված բազմաբովանդակ զարդանկարներ ունեցող գորգերը համեմատում է հին անցյալի գորգերի հետ։ Այցելուի համար պարզ է դառնում, որ Հայաստանում աճել է գորգագործների մի ամբողջ սերունդ, որոնք նոր գորգերի վրա կերտել են ռևոլուցիայի առաջնորդների՝ Լենինի և Ստալինի, ընկերներ Մոլոտովի, Միկոյանի, Բերիայի կերպարները։

Ցուցադրված գորգերը ունեն զարդանկարների նոր բովանդակություն, գույների նոր կոմպոզիցիա և նոր սյուժետ և դրանցից շատերը նման են թավշի։ Ցուցադրական այս սրահի երկու պատերը և հատակը ծածկված են հայկական գորգերի մի քանի տասնյակ գեղեցիկ նմուշներով։ Գորգերի ֆոնի վրա ցուցադրված են Հայաստանի Արհեստագործական կոոպերացիայի արտելների արտադրանքի բազմազան նմուշներ։

Ցուցահանդեսի միջանցքում դրված է լույսերով ողողված ընկեր Ստալինի հսկա արձանը։ Դիտելով այն, այցելուն զգում է, որ հաղթանակի ցուցահանդեսում դրված հենց հիմա իր սեփական աչքով տեսած հազարավոր էքսպոնատները և իր այսօրվա ազատությունը ինքը ստացել է մեծ առաջնորդից։ Այստեղ պետք է փնտրել այն ջերմ խոսքերը, որ գրված է տպավորությունների մատյանում այցելուների կողմից, որոնցից մեկը, հայրենադարձ Ա. Տիրացյանը, գրում է՝ «...Ես, իբրև հայրենադարձ շատ կուզեի, որ մեր արտասահմանի եղբայրները բոլորը, բոլորը հնարավորություն ունենան այս ցուցահանդեսը դիտելու—սա մի սքանչելի գիրք է, որի մեջ կարելի է կարդալ մեր պանծալի սոցիալիստական հայրենիքի աշխատանքային բոլոր սխրագործությունները։ Սիրտդ հրճվում է մի անհուն ուրախությամբ և ունենում ես երախտագիտական խորը զգացմունք դեպի այն մարդը, որը ոգեշնչողն է մեր հայրենիքի սխրագործությունների՝ դա ընկեր Ստալինն է»։

Հուզիչ են բժշկական ինստիտուտի մի

խումբ ուսանողների թողած տպավորությունները, նրանք գրում են. «...Հիացմունքի մեծ տպավորությունների տակ, հրճվանքից ուռչում է մարդու կուրծքը, երբ տեսնում է այն հաջողությունները, որոնք ձեռք են բերվել այս 30 տարիների ընթացքում, Հայաստանի ոսկե դարի ընթացքում, ...մեզ համարում ենք ամենաերջանիկ սերունդը, որ բախտ ենք ունեցել տեսնել մեր մայր Հայաստանը իր ծաղկման շրջանում։ Շնորհակալություն ենք հայտնում և երախտագիտ ենք դդում մեզ մեր պարտիայի և կառավարության առաջ, ուսանողության մեծ բարեկամ ընկեր Ստալինի առաջ»։

Սովետական Հայաստանի աշխատավորությունը Ստալինյան կոնստիտուցիայով լայն հնարավորություն է ստացել ձրի բժշկական օգնության, կուրորտներից ե հանգստյան տներից օգտվելու՝ մոր ե մանկան խնամքի ու բազմաթիվ այլ բնագավառներում։ Երեսուն տարիների ընթացքում կառուցվել են բազմաթիվ հիվանդանոցներ, կլինիկաներ, դեղատներ։

Առողջապահությանը նվիրված բաժնում լուսանկարների և դիագրամների միջոցով տրվում է առողջապահության բնագավառում մեր ձեռք բերած նվաճումների լրիվ պատկերը։

Եթե 1928 թվին մսուրների ընդհանուր թիվը վերցնենք պայմանական 100, ապա այն 1950 թվին աճել է 2500-ով, կամ կանանց և երեխաների կոնսուլտացիաների թիվը 1928 թվի 100 պայմանական միավորի դիմաց 1950 թվին հասնում է 1160-ի, նույն տեմպով աճել է նաև ծննդյան մահճակալների թիվը, 1928 թվի 100 պայմանական միավորի դիմաց 1950 թվին հասնում է 758 միավորի։ Դեղատների թիվը 1913 թվի պայմանական 100-ի դիմաց 1950 թվին հասնում է 443-ի։ Կուրորտներ և հանգստյան տներ նախասովետական Հայաստանում բոլորովին չեն եղել, այժմ 1927 թվի 100 միավորի համեմատությամբ 1950 թվին 863 միավորի է հասնում նրա աճը։

Նախասովետական Հայաստանում աշխատող բժիշկների թիվը աննշան էր։ Սովետական Հայաստանում աշխատավորության միջից աճել է բժշկական կադրերի նոր սերունդ, աճել են տաղանդավոր երիտասարդներ, որոնք ոչ միայն հայրենական մեծ պատերազմի ժամանակ, այլև ստալինյան հնգամյակների խաղաղ շինարարության շրջանում ցուցաբերեցին բարձր հայրենասիրություն, բարդ վերահատումների հմտություն։ Ահա այդ նոր կադրերի աճի մասին է խոսում հետևյալ թիվը 1913 թ. պայմանական 100-ի դիմաց 1950 թ. բժշկական կադրերը հասնում են 5914-ի։ Կամ եթե վերցնենք բժշկական միջին դպրոցների շրջանավարտների աճը, կստանանք հետևյալ պատկերը։ 1929 թվի պայմանական 100-ի դիմաց 1950 թ. ավարտել են 3845 մարդ։ 1913 թվի համեմատությամբ հիվանդանոցների թիվը ավելացել է ութ և կես անգամ, իսկ մահճակալների թիվը պայմանական 100-ի դիմաց 3981-ով։

Այս թվերը լավագույն ցուցանիշ են առողջապահության մասին։ Հատուկ վահանների վրա ներկայացված են ֆիզիկական կուլտուրան ու նրա առաջավորները՝ Շահինյանը Կարմիրյանը և ուրիշները։ Ցուցափեղկերում դրված են մի քանիսը այն գավաթներից, որ մեր ֆիզկուլտուրնիկները ստացել են իրենց հաղթանակների համար։

Ցուցահանդեսում մեծ հիացմունքով է դիտվում սննդարդյունաբերության բաժինը, որը ձևավորված է ճաշակով և ներկայացված է հարուստ ասորտիմենտով։ Այստեղ ներկայացված են Հայկոնսերվտրեստի արտադրած պահածոների բազմաթիվ տեսակները (վարենիներ, կոմպոտներ, թթուներ և այլն)։ Լավ տպավորություն է թողնում Արարատ տրեստի կոնյակների ու անուշահամ գինիների առատ ստենդը։ Լավ է ձևավորված նաև Մսի ու կաթի մինիստրության բաժինը։

Վաղուց արդեն հոչակված հայկական հանքային ջրերին նվիրված ստենդում ներկայացված են «Դիլիջան», «Ջերմուկ», «Արզնի» ջրերի տեսակները։ Սովետական շատ աշխատավորների է ծանոթ այս ջրերի բուժիչ հատկությունը, հարյուրավոր և հազարավոր հիվանդներ կուրորտներում բուժվել են այս ջրերով։ Այս ջրերի նշանակությունը վաղուց արդեն հայտնի է Հայաստանի սահմաններից դուրս։

Լավ են ցուցադրված Ծխախոտի և ՋԵԹ օճառի գործարանների բաժինները, ինչպես նաև կարամել-մակարոնի բաժինները։

Սենյակի կենտրոնում հատուկ պատրաստած վազայում և նրա ձևավոր պատվանդանի վրա ցուցադրված են չորացրած մրգերի տեսակները։

Առատության, բարիքի և ազատ աշխատանքի արդյունքների աշխարհ է մեր նվաճումների ցուցահանդեսը։ 1950 թիվը հանդիսացավ մեր նվաճումների ցուցադրման տարի։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան նոր կյանքի կոչեց հայ ժողովրդին, տվեց նրան վերածնվելու և անկաշկանդ զարգանալու լայն հնարավորություն։

Ընդամենը երեք տասնամյակ և արմատա-

պես փոխվեց, անճանաչելի դարձավ Հայաստանը, կործանումից փրկվեց և ոտքի կանգնեց, հարյուրավոր և հազարավոր հեկտար նոր տարածություններով այգեպատվեց։ Ծաղկեց Սովետական Հայաստանի՝ Երևանի արյունաշաղախ հողը։ Երևանի խարխուլ, ավերված մեր օջախները վերակենդանացան ըոլշեիկների պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ, հայ ժողովրդի ազատարար Ստալինի ջանքերով։

Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ